ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/18 ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով տրանսֆորմատորի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Երևան 17 ապրիլի 2019թ.

ժամը. 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝ **Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Հայտերի բացման մասին

(Ս. Մելքոնյան)

«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/18» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով տրանսֆորմատորի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ ք. Երևան Վարդանանց փակուղի 8ա, 6-րդ հարկ հասցեում, 2019 թվականի ապրիլի 17-ին, ժամը 12:00-ին:

Գնահատող հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց տրանսֆորմատորի գնման նախահաշվային գինը մեկ թվով արտահայտված՝

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գինը (ՀՀ դրամ)
1	Տրանսֆորմատոր հոսանքի	14000000 (տասնչորս միլիոն)

Հայտերի բացումն իրականացվել է www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված կարգով:

1.1.Հայտ ներկայացրած մասնակիցների անվանումը

«ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/18» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգին www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Հ/Հ	Մասնակիցների անվանումը
1	ԱՁ «Արմեն Տոնոյան»

2	ԱՁ «Գրիգոր Այվազյան»
3	«Առսարքտեխ» ՍՊԸ
4	«Էներգովեստ» ՍՊԸ

1.2 Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

«Արմեն Տոնոյան» ԱՁ-ը www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել էր հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը: ԱՁ «Գրիգոր Այվազյան», «Առսարքտեխ» ՍՊ և «Էներգովեստ» ՍՊ ընկերությունները www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը բացառությամբ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվան և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ կատարված նմանատիպ պայմանագրերը, հաշիվ ապրանքագրերի պատճենները, պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.3 Մասնակիցների առաջարկած գինը

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	Ընդհանուր գին, ներառյալ ԱԱՀ
1	ԱՁ «Արմեն Տոնոյան»	12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար)	12 500 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր հազար)
2	ԱՁ «Գրիգոր Այվազյան»	14 200 000 (տասնչորս միլիոն երկու հարյուր հազար)	14200000 (տասնչորս միլիոն երկու հարյուր հազար)
3	«Առսարքտեխ» ՍՊԸ	9 875 000 (ինը միլիոն ութ հարյուր յոթանասունհինգ հազար)	11 850 000 (տասնմեկ միլիոն ութ հարյուր հիսուն հազար)
4	«Էներգովեստ» ՍՊԸ	10 910 000 (տաս միլիոն ինը հարյուր տաս հազար)	13 092 000 (տասներեք միլիոն իննսուներկու հազար)

1.4 Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները՝

«Գրիգոր Այվազյան» ԱՁ-ի հայտում՝

1. մասնակիցը չի ներկայացրել ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/18 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր (պայմանագրեր), պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը:

Նմանատիպ են համարվում տրանսֆորմատորների և հարակից էներգետիկ սարքավորումներ (տրանսֆորմատորային ենթակայան, դաշտային ենթակայան) ապրանքների մատակարարված լինելը:

«Առսարքտեխ» ՍՊԸ ընկերության հայտում՝

1. մասնակիցը չի ներկայացրել ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/18 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պայմանագիր (պայմանագրեր), պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը:

   Նմանատիպ են համարվում տրանսֆորմատորների և հարակից էներգետիկ սարքավորումներ (տրանսֆորմատորային ենթակայան, դաշտային ենթակայան) ապրանքների մատակարարված լինելը:
2. տեխնիկական բնութագրում՝
   - նշված չէ առաջարկվող ապրանքի արտադրության տարեթվի և չշահագործված լինելու վերաբերյալ տեղեկատվություն,
   - արտադրողի կողմից ապրանքի որակի համապատասխանության սերտիֆիկատի վավերացման պայմանը հստակ չէ ձևակերպված,
   - ապրանքի արտադրողի վերաբերյալ ներկայացրել է երկու կազմակերպության անվանում (ներկայացնել ներկրվող ապրանքի մեկ արտադրողի անվանում):

«Էներգովեստ» ՍՊԸ ընկերության հայտում՝

1. մասնակիցը չի ներկայացրել ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/18 ծածկագրով հրավերի 1-ին մասի 2.5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած նմանատիպ պ այմանագիր (պայմանագրեր), պայմանագրերի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը:

   Նմանատիպ են համարվում տրանսֆորմատորների և հարակից էներգետիկ սարքավորումներ (տրանսֆորմատորային ենթակայան, դաշտային ենթակայան) ապրանքների մատակարարված լինելը:
2. տեխնիկական բնութագրում՝
   - նշված չէ առաջարկվող ապրանքի արտադրության տարեթվի և չշահագործված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը,
   - արտադրողի կողմից ապրանքի որակի համապատասխանության սերտիֆիկատի վավերացման պայմանը հստակ չէ ձևակերպված,

«Արմեն Տոնոյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:

<u>Գնահատող հանձնաժողովը որոշեց</u>՝

1. Նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացում «Գրիգոր Այվազյան» ԱՁ, «Առսարքտեխ» ՍՊ և «Էներգովեստ» ՍՊ ընկերություններին առաջարկել ներկայացնելու արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

1.5 «ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱՊՁԲ-19/18» ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Գնահատող հանձնաժողովի՝ հայտերի գնահատման նիստ հրավիրել 18.04.2019թ ժամը 12:30-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան